DOI: 10.54503/1829-4324.2023.2-270

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՈՒՐՋ

Արմինե Գրիգորի Զախարյան

Հոդվածը ստացվել է՝ 02.10.23, ուղարկվել է գրախոսման՝ 10.11.23, երաշխավորվել է տպագրության՝ 07.12.23

Ներածություն: Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս փուլում կրթության ոլորտի ինովացիոն զարգացման խթանումը հանդիսանում է բնակչության կենսամակարդակի բարելավման կարևորագույն ուղիներից մեկը: Ինովացիոն գործունեության ակտիվացումը, որպես կանոն, ենթադրում է ինովացիոն կրթական համակարգի առկայություն: Վերջինս պահանջում է ինովացիոն կրթական ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում, կրթության ոլորտի թվային փոխակերպման խթանում, ինչպես նաև կրթության, գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության խորացում: Այս առումով մեծապես կարևորվում է ՀՀ-ում կրթության ոլորտի ֆինանսավորման հնարավորությունների և միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության թեմայի արդիականությունը:**

Հետազոտության նպատակն է ինովացիոն կրթության խթանման հնարավորությունների ուսումնասիրության միջոցով Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի ինովացիոն զարգացման ներուժի արդյունավետ կիրառման և մրցունակության բարձրացման եղանակների բացահայտումը: **Հետազոտության խնդիրներն են** ինովացիոն կրթության խթանման մեխանիզմների վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ կրթական համակարգի ինովացիոն զարգացման հնարավոր ուղիների մշակումը:

Գրականության ակնարկ: Կրթության ոլորտի ինովացիոն զարգացման հիմնահարցերը դիտարկվել են մի շարք աշխատություններում: Մասնավորապես՝ կրթության գործընթացում ինովացիաների կիրառման հիմնախնդիրները ներկայացված են **Ջիմի Կասասի, Թոդ Ուիտակերի և Ջեֆրի Զուլի** հետազոտություններում[1], որտեղ վերլուծվում են մասնագիտական ուսուցման անհատականացման, կրթական մշակույթի խթանման, կրթական տարածքների նախագծման, ուսուցման և գնահատման մոտեցումների կատարելագործման, սովորողների հետ փոխհարաբերությունների կառուցման, գրադարանների դիրքավորման, տեխնոլոգիական վերափոխումների խթանման և դասավանդողների մասնագիտական ու անձնական հմտությունների զարգացման խնդիրները:

Թվային առաջնորդության և կրթական մշակույթի փոխազդեցության հիմնա-

[1] Casas Jimmy, Whitaker Todd, Zoul Jeffrey. 10 Perspectives on Innovation in Education, Routledge; 1st Edition, 2019, 162 pages, ISBN: 978-1138598836

խնդիրները ուսումնասիրված են **Էրիկ Շենինգերի** հետազոտություններում[1], որտեղ թվային առաջնորդությունը ներկայացվում է որպես ռազմավարական մտածելակերպ և վարքագիծ, որն ուղղված է իմաստալից, թափանցիկ և գրավիչ դպրոցական մշակույթի ձևավորմանը և զարգացմանը:

Դեյվ Բերջեսի հետազոտություններում[2] ներկայացված են կրթական գործնական մոտեցումներ և նորարար գաղափարներ, որոնք կարող են նպաստել սովորողների ներգրավվածության մեծացմանը, դասավանդողների ստեղծագործական ունակությունների զարգացմանը և գիտա-մանկավարժական գործունեության վերափոխմանը:

Քերոլ Էնն Թոմլինսոնի և **Մայքլ Մերֆիի** հետազոտություններում[3] դիտարկվում են շարունակական մասնագիտական ուսուցման, կրթական մշակույթի ձևավորման և ծրագրերի գնահատման համար անհրաժեշտ մոտեցումները՝ հիմնված տարբերակված ուսուցման վրա: Մասնավորապես, հեղինակները ներկայացրել են դասավանդողների տարբերակման պրակտիկայի տարածման խթանման և կրթական գործընթացի վրա վերջինիս ազդեցության գնահատման մեթոդները:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել ինովացիոն կրթության խթանման հիմնախնդիրները լուսաբանող հայրենական և արտասահմանյան հեղինակային հրապարակումները, գիտաժողովների հրապարակած նյութերը, դիտարկվող ոլորտների գործառույթները և փոխհարաբերությունները կանոնակարգող նորմատիվ բնույթի իրավական ակտերը և այլն:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային և իրավիճակային վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների մեթոդները:

Վերլուծություն: Ժամանակակից տնտեսական պայմաններում ՀՀ-ում մեծապես կարևորվում է կրթական համակարգի արդյունավետության բարձրացումը, քանի որ վերջինս հանդիսանում է ինչպես տնտեսության զարգացման խթանման, այնպես էլ բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևորագույն միջոց: Այս պարագայում կրթության ոլորտի ինովացիոն զարգացումը դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն: Վերջինս էլ, իր հերթին, պահանջում է կրթական համակարգի ֆինանսավորման համապատասխան մեխանիզմների մշակում և կիրառում:

---

[1] Sheninger Eric C. Digital Leadership: Changing Paradigms for Changing Times, Corwin; 1st edition, 2014, 264 pages, ISBN: 978-1452276618

[2] Burgess Dave. Teach Like a PIRATE: Increase Student Engagement, Boost Your Creativity, and Transform Your Life as an Educator, Dave Burgess Consulting, Incorporated; Illustrated edition, 2012, 198 pages, ISBN: 978-0988217607

[3] Tomlinson Carol Ann, Murphy Michael. Leading for Differentiation: Growing Teachers Who Grow Kids, ASCD, 2015, 167 pages, ISBN: 978-1416620808

Ինովացիոն կրթական համակարգը ենթադրում է ժամանակակից և պահանջարկ վայելող նորարարական ուսուցման կազմակերպում՝ միաժամանակ բոլոր կրթական մակարդակներում: Հետևաբար, անհրաժեշտ է հաշվի առնել ազգային և հասարակական մենթալիտետը, կրթության ոլորտում ձևավորված ավանդույթները, ինչպես նաև անվանի մասնագետների դասավանդման երկարամյա փորձը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել կրթության ոլորտի թվային վերափոխման և առողջապահական տեխնոլոգիաների կիրառման խնդիրներին, քանի որ դրանք նպաստում են սովորողների առավել արդյունավետ ուսուցմանը: Կրթության ոլորտի թվային վերափոխումը կարող է էապես նպաստել գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության խորացմանը, նորարարական և ներդրումային գործունեության ակտիվացմանը, ինչը բխում է տնտեսական զարգացման ժամանակակից պահանջներից: Կրթության ոլորտի թվային փոխակերպումը նաև անհրաժեշտ պայման է թվային տնտեսությանն անցնելու համար, և ենթադրում է ոչ միայն նյութատեխնիկական բազայի զարգացում, այլև համապատասխան ենթակառուցվածքի ստեղծման գործընթաց, որը թույլ կտա արդյունավետորեն կիրառել նորարարական տեխնոլոգիաները, ապահովել կառավարման համակարգի ճկունությունը, ներդնել նորագույն կրթական տեխնոլոգիաներ և մշակել անհատականացված ուսուցման մոդելներ[1]: Նկատենք, որ ներկայում ինովացիոն կրթության գործընթացում առողջապահական տեխնոլոգիաների կիրառումը սերտորեն կապված է վիրուսային վարակների և հիվանդությունների տարածման ֆոնին սովորողների առողջական վիճակի ամենօրյա մոնիթորինգի (ուսումնասիրության և վերահսկողության), հավասարակշռված սննդակարգի ապահովման, սպորտային խմբակներում պարապմունքների կազմակերպման, առողջ ապրելակերպի խթանման, ուսումնական տարածքների մաքրության և անձնական հիգիենայի կանոնների խստիվ պահպանման, հնարավորության դեպքում բացօդյա արտադասարանական պարապմունքների անցկացման, ծառերի և ծաղիկների տնկման, ինչպես նաև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ անհատական հոգեբանական մոտեցման ցուցաբերման հետ: Անշուշտ, ինովացիոն կրթական համակարգն, առաջին հերթին, պետք է նպաստի անհատի նորարարական զարգացմանը և որակյալ մասնագետների ձևավորմանը, ինչն էլ կխթանի տնտեսության ինովացիոն զարգացումը: Նշենք նաև, որ ինովացիոն անհատը՝ հաղորդակցությանը պատրաստակամ (թիմում աշխատելու ունակություն, հաղորդակցություն) անձնավորություն է, ով կարող է ինտեգրել տարբեր տեսակի գիտելիքներ (ստեղծելու կարողություն, ստեղծագործականություն), վերահիմաստավորել կենսագործունեության առկա պայմանները (ինտելեկտուալ ռեսուրսի առկայություն) և հասկանալ ու կանխատեսել սեփական ինովացիոն գործունեության արդյունքում ստացված նորարարությունների հետևանքները, և կրել բարոյական պատասխանատվություն

[1] Ա.Գ. Զախարյան, ՀՀ կրթության ոլորտի թվային փոխակերպման շուրջ, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, (Գիտական հոդվածների ժողովածու - 2022), ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Երևան, 2022թ., N 2, էջ 321-365:

վերջինիս համար (սոցիալական հասունություն): Միաժամանակ, պետք է հաշվի առնել, որ ինովացիոն անհատը ձևավորվում է արտաքին միջավայրում, որում էլ կայանում է անհատի նորարարական տեսակի էության դիալեկտիկական բնույթը[1]:

Ինչպես հայտնի է, 2022 թ.-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի ընթացքում կազմակերպվել է «Փոխակերպելով կրթությունը» գագաթնաժողովը, որի նպատակն էր գլոբալ քաղաքական օրակարգում ներառել կրթության հիմնահարցը և նախաձեռնել գործողությունների, հավակնությունների, համերաշխության և լուծումների մոբիլիզացում՝ համաճարակի հետ կապված ուսումնառության կորուստները վերականգնելու և արագ փոփոխվող աշխարհում կրթության վերափոխման հիմքերը դնելու համար: Վերջինիս համապատասխան Հայաստանն ազգային խորհրդակցություններ է անցկացրել ՄԱԿ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ՝ ապահովելու մասնակցային և համապարփակ խորհրդատվական գործընթաց, այդ թվում՝ երիտասարդության շրջանում՝ բացահայտելու կրթության ոլորտում առկա մարտահրավերները և դրանց արձագանքելու հնարավոր լուծումները: Բացի այդ, 2022 թ.-ին Փարիզում տեղի է ունեցել նաև Կրթության փոխակերպման գագաթնաժողովի (Transforming Education Summit) նախապատրաստական համաժողովը: Հայաստանը պատրաստակամ է իրականացնել կրթության վերափոխում՝ «ՀՀ կրթության՝ մինչև 2030 զարգացման պետական ծրագրի» միջոցով[2], որը համահունչ է ՄԱԿ-ի կողմից հռչակված կրթության փոխակերպման դրույթներին, մասնավորապես՝

- համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում, որը յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման և անձնային առանձնահատկություններից բխող որակյալ և արդյունավետ կրթական ծառայությունները ՀՀ ողջ տարածքում,
- կրթության արդյունավետության բարձրացում, ինչը կապահովի ռեսուրսի (ներառյալ՝ մարդկային) առավելագույն օպտիմալ և արդյունահենք տեղաբաշխում, համակարգի գործընթացային, ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացում,
- բոլոր բնակավայրերում մատչելի նախադպրոցական ծառայությունների ապահովում՝ երեխաների 95% ընդգրկվածությամբ,
- ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից,
- կրթաթոշակների տրամադրում և փոխհատուցում՝ բացառելով անվճարունակության պատճառով ընդունակ ուսանողների դուրս մնալը բարձրագույն և մասնագիտական կրթությունից:

2022 թ.-ին ՄԱԿ-ի կողմից անցկացված «Փոխակերպելով կրթությունը» գագաթնաժողովին հաջորդել է «Ապահովելու հիմնարար ուսումնառությունը՝ որ-

---

[1] Касаткин П.И. Современное образование: функции и предназначение, Проблемы современного образования, N5, 2017, с. 109-120, https://cyberleninka.ru/article/n/sovremennoe-obrazovanie-funktsii-i-prednaznachenie

[2] Հայաստանը միացել է «Ապահովել հիմնարար ուսումնառությունը՝ որպես կրթության փոխակերպման առանցքային տարր» գլոբալ հանձնառությանը, https://escs.am/am/news/14849

պես կրթության փոխակերպման առանցքայինն տարր» հանձնառությունը, որին միանում է նաև Հայաստանը: Գլոբալ հանձնառությանը միացած մյուս երկրներն են՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Բելգիան, Եգիպտոսը, Կամբոջիան, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը, Սենեգալը և Սիերա Լեոնեն: Հանձնառությանը միանալը ևս մեկ անգամ փաստում է Հայաստանի կամքը՝ հիմնելու որակապես նոր կրթություն:

Նշենք նաև, որ կարևորելով բնագիտամաթեմատիկական առարկաների դերը և տեղեկատվական տեխնոլոգիաների, ինժեներության նորովի կիրառումը ուսումնական գործընթացում՝ Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցը հագեցած լաբորատորիաներ ունենալու ծրագիրը ներկայացրել է ՀՀ կառավարություն և ԿԳՄՍ նախարարություն, որն արժանացել է հավանության և կյանքի կոչվել[1]:

Բացի այդ, ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել են «ԱԲ (արհեստական բանականության) սերունդ» դպրոցական փորձարարական ծրագիրը, որը կփորձարկվի 2023 թ.-ի սեպտեմբերի 1-ից մինչև 2026 թ.-ի օգոստոս՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ և ոլորտի կառույցների ու մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ[2]: «ԱԲ սերունդ» դպրոցական ծրագիրը «ԱԲ սերունդ» նախագծի առաջին բաղադրիչն է, որը փորձարարական ձևաչափով կներդրվի միջնակարգ կրթության երրորդ աստիճան (10-12-րդ դասարաններ) ունեցող ուսումնական հաստատություններում: Այն նպատակ ունի սովորողների շրջանում ձևավորելու մաթեմատիկայի և համակարգչային գիտության հիմքային կարողունակությունները, որոնք անհրաժեշտ են արհեստական բանականության ոլորտում մասնագիտանալու համար: Ծրագրի նպատակն է նաև բարձրացնելու աշակերտների գրագիտությունն ու մոտիվացիան ԱԲ և մաթեմատիկահեն մասնագիտություններում հետազոտական և նորարար ուղով շարունակելու համար, ձևավորել արհեստական բանականության վերաբերյալ բազային կարողունակություններ և գործնական գիտելիքներ: Փորձարարական ծրագրով սովորողներն ուսումնասիրում են հետևյալ դասընթացները՝ համաձայն ծրագրի օրինակելի ուսումնական պլանի.

- խորացված մաթեմատիկա՝ համաձայն «Հանրահաշիվ և մաթ.անալիզի տարրեր» առարկայի նոր չափորոշչի և ծրագրի պահանջների և Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի մշակած մեթոդաբանության,
- մասնագիտական առարկաները (համակարգչային գիտություն (Python ծրագրավորում) և արհեստական բանականություն)՝ որպես ընտրովի առարկաներ՝ համաձայն հիմնադրամի մշակած և նախարարության կողմից երաշխավորված ծրագրերի և մեթոդաբանության,
- ԱԲ նախագծային ուսուցում:

---

[1] Բացվել են ֆիզմաթ դպրոցի ինժեներական լաբորատորիաները, https://escs.am/am/news/15687

[2] Արհեստական բանականության ոլորտի գիտնականի և նորարարի կրթական ուղի՝ սկսած դպրոցից, https://escs.am/am/news/17620

Փորձարարական ծրագրի ուսումնական պլանով սահմանված մասնագիտական առարկաները հանդիսանում են նոր ներդրված դասընթացներ և չեն փոխարինում հանրակրթական հիմնական ծրագրի ուսպլանով հաստատված առարկաներին:

Կրթության ոլորտի ինովացիոն զարգացման գործընթացում մեծապես կարևորվում են վերջինիս ֆինանսավորման հիմնահարցերը, հետևաբար՝ ներկայացնենք նաև մի շարք երկրներում կրթական համակարգի ֆինանսավորման առանձնահատկությունները:

Ֆինլյանդիա: Ֆինլյանդիայի Կրթության նախարարությունը մշակել է վաուչերային սխեմաների կիրառման զանազան տարբերակներ: Ենթադրվում է յուրաքանչյուր ուսանողի համար բացել «հատուկ կրթական հաշիվ» բանկում՝ նրա ուսման ժամանակահատվածի կտրվածքով, որը պետք է գրանցվի Վաուչերների կառավարման կենտրոնական ընկերության կողմից[1]: Այս վաուչերները պետք է հնարավորություն ընձեռեն բարձրագույն կրթություն ստանալ անհատի ամբողջ կյանքի տևողության ընթացքում: Ներկայում Ֆինլանդիայում փորձնականորեն մշակվում են հետևյալ մոդելները.

1. Համալսարանները ամբողջ պետական ֆինանսավորումը ստանում են վաուչերների միջոցով: Պետությունը հատուկ դեպոզիտում տեղադրում է վաուչերների վճարման միջոցները, ընդ որում, 1 վաուչերի գումարը կազմում է ուսանողի 1 ամսվա ուսուցման արժեքը ցանկացած համալսարանում: Իսկ կոնկրետ համալսարանը ուսանողներն ընտրում են ինքնուրույն: Փաստացի մատուցված կրթական ծառայությունների դիմաց համալսարանը համապատասխան հաշվից ձեռք է բերում վաուչերների որոշակի թվաքանակ (ուսանողի ուսուցման ամիսներին հավասար) և դրա դիմաց ստանում պետական ֆինանսավորում, որը տարբերակվում է՝ կախված մասնագիտությունից:

2. Վաուչերների հիման վրա բաշխվում է պետական ֆինանսավորման մոտ 30%-ը: Մնացած դրամական միջոցները կրթության նախարարությունը բաշխում է ելնելով համալսարանների աշխատանքի արդյունավետությունից:

3. Ֆինանսավորումը տրվում է ուսանողին միայն այն դեպքում, երբ նա «իր» ԲՈՒՀ-ում սովորելուց բացի ուսումնասիրում է նաև մի շարք առարկաներ այլ ԲՈՒՀ-երում: Վերջինս իրականացվում է տարբեր ԲՈՒՀ-երի միջև կոոպերացիայի խորացման նպատակով, միաժամանակ ապահովելով կրթական ծառայությունների դիմաց ֆինանսական միջոցների ներհոսք ուսանողների համար առավել հետաքրքիր դասընթացներ կազմակերպող համալսարաններ:

4. Աստիճանական զարգացման մոդել: Այս մոդելը ենթադրում է առկա կրթական համակարգի աստիճանական արդիականացում՝ անցում կատարելով վաուչերների միջոցով կրթության ֆինանսավորման համակարգին: Յուրաքանչյուր անհատ իր ծննդյան օրվանից ստանում է վաուչերների ֆիքսված թվաքա-

[1] Вахштайн В. С. Система образования Финляндии, Вестник Российской академии наук, 2008, том 78, № 4, с. 360-364, http://naukarus.com/sistema-obrazovaniya-finlyandii

նակ, որոնք նա կարող է օգտագործել իր ողջ կյանքի ընթացքում՝ ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատությունում կրթություն ստանալու նպատակով: Եթե ուսանողի կողմից բոլոր ստացված վաուչերները սպառվեն, ապա նա պետք է ինքնուրույն վճարի իր հետագա ուսման համար:

Չիլի: Վաուչերային համակարգը Չիլիում ներդրվել է 1980 թ.-ին և փաստացի վերափոխվել է ըստ ուսանողների թվաքանակի ԲՈՒՀ-երի ֆինանսավորման գործուն միջոցի: Այս համակարգում կրթական ծրագրերով ֆինանսավորումն իրականացվում է հետևյալ երեք աղբյուրների հաշվին[1].

- Պետական բյուջեն, որի հաշվին իրականցվում է ուղղակի ֆինանսավորում:
- Կրթական վարկեր: Ուսման վարձը վճարելու նպատակով ուսանողներին տրամադրվող կրթական վարկերի իրական տոկոսադրույքը ֆինանսավորման նոր համակարգի ներդրման սկզբնական ժամանակահատվածում կազմել է 1 % տարեկան: Իսկ վարկի գծով վճարումներն սկսվել են ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո 2 տարի անց և շարունակվել են 10 տարվա ընթացքում:
- Վաուչերներ, որոնց միջոցով պետությունը ֆինանսավորում է ուսանողների ուսման վարձը:

ԲՈՒՀ-երի մեծամասնության համար ֆինանսական ռեսուրսների հիմնական աղբյուրներ են հանդիսանում ուսանողներին տրամադրվող վաուչերները, նրանց սեփական կամ ընտանեկան բյուջեների միջոցների հաշվին իրականացվող հավելավճարները, ինչպես նաև կրթական վարկը:

Ճապոնիա: Ճապոնիայում առաջատար համալսարաններն են հանդիսանում Տոկիոյի, Կիոտոյի, Տոխոկուի, Օսակայի, Կյուսյուի, Հոկկայդոի և Նագոիի նախկին կայսրական համալսարանները, որոնց ուսման վարձերը բավականաչափ բարձր են: 2004թ.-ից բոլոր պետական համալսարանները ստացել են կրթության ոլորտում գործող հատուկ կորպորացիաների իրավաբանական կարգավիճակ[2]: Այս կորպորացիաների կառավարումը կենտրոնացված է նախագահի (ռեկտորի) և տնօրենների խորհրդի (պրոռեկտորների) մոտ, որոնք ունեն մեծ լիազորություններ պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի վարձատրության մակարդակի և համակարգի, նրանց վարձման ժամկետների և բյուջետային ծախսերի որոշման գործում: Ռեկտորն ընտրվում է տնօրենների խորհրդի կողմից համալսարանի ստորաբաժանումների կամ հիմնադիրների կողմից առաջադրված թեկնածուների թվից: Հեռանկարային առաջնային հարցերը քննարկվում են կառավարման, կրթության և գիտության խորհրդակցական կոմիտեներում, որտեղ պարտադիր կերպով ներառվում են անկախ փորձագետներ: Պետական և հան-

---

[1] Кулакова М.Н. Международные модели финансирования вузов и их применения для ВУЗов России в период реформирования системы высшего образования // Территория новых возможностей. Вестник Владивостокского государственного университета экономики и сервиса, 2011. – №1 (10). – С. 51–60.

[2] Белов А. В., Золотов А. В. Экономические аспекты деятельности университетов в Японии, научный журнал Вопросы образования. 2014. № 3, с. 34-37, https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskie-aspekty-deyatelnosti-universitetov-v-yaponii

բային համալսարաններին հատուկ կորպորացիաների կարգավիճակ շնորհելով պետությունը որոշում ընդունեց նաև յուրաքանչյուր տարի պարբերաբար 1%-ով նվազեցնել համալսարանների ընթացիկ գործունեության ֆինանսավորմանն ուղղվող բյուջետային դոտացիաները: Նաև համալսարանները դուրս բերվեցին նախարարության անմիջական ենթակայությունից, իսկ աշխատակիցները կորցրին քաղաքացիական ծառայողների կարգավիճակը, ինչն էլ նախադրյալներ է ստեղծեց աշխատակազմի կրճատման համար:

2005-2010թթ.-ին պետական համալսարաններից հետո հանրային համալսարանների մեծամասնությունը նույնպես ձեռք բերեցին հատուկ կորպորացիաների կարգավիճակ և կառավարման համանման կառուցվածք, որի կոնկրետ ուրվագիծը որոշվել է հիմնադիրների կողմից:

Ճապոնիայի կրթական համակարգի ֆինանսավորման գործընթացում հիմնականում գերակայում են մասնավոր աղբյուրները: Կրթության ոլորտում իրականացված ծախսերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը կազմում է մոտ 5.1 տոկոս, ինչը, սակայն, զիջում է ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշին, որը կազմում է 6.3%:

Նշենք նաև, որ Ճապոնիայում մասնավոր և պետական ԲՈՒՀ-երի եկամուտների կառուցվածքները էապես տարբերվում են: Պետական ԲՈՒՀ-երում բյուջետային սուբսիդիաները կազմում են եկամուտների մոտ 55.4%-ը, իսկ մասնավորները ստանում են գրեթե նույն չափով եկամուտներ (55.7%) ուսանողների ուսման վարձի հաշվին: Բացի այդ, Ճապոնիայում տրամադրվում են նաև զգալի հարկային արտոնություններ կրթական նվիրատվությունների համար, սակայն, անհատների և կազմակերպությունների մշակույթն ու սովորույթները շատ դանդաղ են փոփոխվում, ինչի հետևանքով ֆինանսավորման այս աղբյուրի (որպես ԲՈՒՀ-երի կորպորատիզացման արդյունքի) օգտագործման հետ կապված սպասումները չեն արդարացվում:

Վերջին տարիներին Ճապոնիայի կրթական համակարգում տեղի են ունենում վերակազմակերպական ակտիվ գործընթացներ, որոնք ենթադրում են միջհամալսարանական կոոպերացիայի խորացում, միաձուլումների և կլանումների ուժգնացում, ինչպես նաև ԲՈՒՀ-երի սնանկացման դեպքերի հաճախակիացում[1]: Հետևաբար, որքան քիչ միջոցներ ունի ԲՈՒՀ-ն, այնքան ավելի մեծ ուշադրություն պետք է հատկացնի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, միաձուլման և խոշորացման, ուսման վարձերի վճարման առավել ճկուն համակարգի կիրառման, եկամուտների դիվերսիֆիկացման (տարբերակման) և այլ հարցերին:

Ճապոնիայի Կրթության նախարարությունը ներդրել է նաև գիտական հետազոտությունների գծով միջոցների հատկացման մրցութային համակարգ: Մասնավորապես, կրթական համակարգի բյուջետային ֆինանսավորման 20%-ը

[1] Белов А. В., Золотов А. В. Экономические аспекты деятельности университетов в Японии, научный журнал Вопросы образования. 2014. № 3, с. 34-37, https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskie-aspekty-deyatelnosti-universitetov-v-yaponii

կազմում են մրցութային համակարգով հատկացումները: Բացի այդ, Կառավարությունը սահմանում է պետական ԲՈՒՀ-երում ուսման վարձի կողմնորոշիչ շեմային չափ, որը ԲՈՒՀ-երը կարող են ավելացնել կամ նվազեցնել 20%-ի սահմաններում: Այս չափանիշը կողմնորոշիչ է հանդիսանում նաև հանրային ԲՈՒՀ-երի համար, իսկ մասնավորներն ուսման վարձը սահմանում են ինքնուրույն: Ճապոնացի ուսանողների մոտ 30%-ը ստանում են անտոկոս կամ ցածր տոկոսներով կրթական վարկեր, իսկ ուսանողների 1-2%-ը՝ անվերադարձ գրանտներ: Ճապոնիայում մեծ տարածում ունի նաև ընտանիքների ֆինանսական միջոցների հաշվին կրթական համակարգի ֆինանսավորումը:

Ամփոփելով կրթության ֆինանսավորման ճապոնական փորձը, նշենք, որ կրթական համակարգի ֆինանսավորման մեթոդները ուղղակի կապի մեջ են գտնվում կորպորատիվ կառավարման, ինչպես նաև անձնակազմի կառավարման ճապոնական մոդելների հետ: Մասնավորապես, կորպորատիվ կառավարման ճապոնական մոդելում մեծ դերակատարում ունեն ընտանիքները, տարածված է բաժնետոմսերի խաչաձև տիրապետման մեթոդը, ինչով էլ բացատրվում է ընտանիքների կողմից կրթական համակարգի ֆինանսավորման մոտեցման առկայությունը: Ինչ վերաբերում է անձնակազմի կառավարման ճապոնական մոդելին, ապա, ինչպես հայտնի է բազմաթիվ հրապարակումներից այնտեղ գերակայում է ընկերություններում («տեղում») ուսուցման կազմակերպման մոտեցումը, ինչը ԲՈՒՀ-երում ուսման բարձր վարձերի, ինչպես նաև գործատուների կողմից իրենց ապագա աշխատակիցներին ներկայացվող հատուկ մասնագիտական պահանջների հետևանք է:

ԱՄՆ: ԱՄՆ-ում կրթության համակարգի ֆինանսավորումն ունի կարևորագույն առանցքային նշանակություն, ինչի մասին է վկայում այն հանգամանքը, որ 1965թ.-ին ընդունված Բարձրագույն կրթության մասին օրենքը մեծամասամբ շոշափում է հենց ֆինանսական ասպեկտները[1]: ԱՄՆ-ում կրթության ոլորտի ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են հանդիսանում.

- նահանգների կառավարությունների ֆինանսական միջոցները՝ 22.7%,
- դաշնային կառավարության ֆինանսական միջոցները՝ 16.4%,
- մունիցիպալ իշխանությունների ֆինանսական միջոցները՝ 6.6%,
- ուսման վարձը՝ 22.8%,
- ներդրումները և մասնավոր նվիրատվությունները՝ 15.3%,
- ԲՈՒՀ-երի մասնագիտական (հիմնականում առողջապահական) գործունեությունից գոյացած միջոցները՝ 10.7%,
- ԲՈՒՀ-երի օժանդակ գործունեությունից ստացված միջոցները,
- գրանտները, պայմանագրերը և այլն[2]:

---

[1] Kaplin W. A., Lee B. A. The Law of Higher Education. San Francisco: John Wiley and Sons, Inc., 2007, p. 365.

[2] Digest of Education Statistics. 2014. Washington, DC: GPO, 2016, http://nces.ed.gov/programs/digest/d14/index.asp

Նշենք նաև, որ ԱՄՆ-ում լայն տարածում է գտել դաշնային նպատակային օժանդակության ցուցաբերման «կրթության հանդիպակաց ֆինանսավորման» մեթոդը, որը ենթադրում է դաշնային և նահանգային նույնաքանակ միջոցների տրամադրում (հավասարաչափ համաֆինանսավորում), ինչպես նաև դաշնային կառավարության կողմից միջոցների նպատակայն օգտագործման հանդեպ կենտրոնացված վերահսկողության իրականացում[1]: Այս մոտեցումը հնարավոր է կիրառել նաև ՀՀ-ում՝ ֆինանսավորման տարբեր աղբյուրների միջոցների խելամիտ համադրման ճանապարհով:

ԱՄՆ-ի կրթության ոլորտը ֆինանսավորող հիմնական դաշնային գերատեսչություններն են հանդիսանում. Կրթության դեպարտամենտը (49.7%), Առողջապահության և մարդկային ծառայությունների դեպարտամենտը (15.7%), Գյուղատնտեսության դեպարտամենտը (12.7%), Վետերանների գործերով դեպարտամենտը (6.4%), Պաշտպանության դեպարտամենտը (3.9%), Աշխատանքի դեպարտամենտը (2.9%), Ազգային գիտության ֆոնդը (2.9%), Էներգետիկայի դեպարտամենտը (1.5%), ՆԱՍԱ-ն (1.2%) և այլ գերատեսչությունները (3.2%)[2]:

Ուսման վարձերի ավելացման պայմաններում հատկապես կարևորվում է ուսանողներին և նրանց ընտանիքներին ցուցաբերվող պետական ֆինանսական աջակցությունը, որի հիմնական տեսակներն են հանդիսանում կրթաթոշակները, գրանտները (սուբսիդիաները կամ դոտացիաները), կրթական վարկերը, ուսանողների համար աշխատանքը և հարկային արտոնությունները: Կրթաթոշակները, սովորաբար, տրամադրվում են ուսման առաջադիմության համար, կախված չեն ուսանողների ֆինանսական վիճակից, և դրանք ենթակա չեն վերադարձման: Գրանտները նույնպես ենթակա չեն վերադարձման, և կախված չեն ուսանողի առաջադիմությունից, սովորաբար, դրանք տրամադրվում են այն դեպքերում, երբ ուսանողներն ի վիճակի չեն վճարել ուսման վարձը: Կրթական վարկերը նույնպես տրամադրվում են ֆինանսական անհրաժեշտության դեպքում և, սովորաբար, արտոնյալ պայմաններով, այսինքն, երկարաժամկետ ժամանակահատվածով և ցածր տոկոսներով: Այս վարկերը ենթակա են վերադարձման, ընդ որում, դրանցից որոշներն՝ դեռ ուսման տարիներին:

Ներկայում ԱՄՆ-ում ստեղծված է կրթության ֆինանսավորման զարգացած տարբերակված համակարգ, որը ներառում է պետական բյուջետային ֆինանսավորումը (դաշնային, նահանգային և մունիցիպալ), մասնավոր անձանց և կառույցների կողմից տրամադրվող ֆինանսավորումը (անհատներ, կորպորացիաներ, բարեգործական ընկերություններ և այլն), կրթական հաստատությունների սեփական միջոցների հաշվին ֆինանսավորումը (կրթական ծառայությունների մատուցման, սեփականության օգտագործման, մասնագիտական և օժանդակ գործունեության արդյունքում ստացված եկամուտները): Կրթության և կացա-

[1] Kaverina E. Yu. The USA. Canada: economy, policy, culture, 2003, no. 7, p. 93.

[2] Digest of Education Statistics. 2014. Washington, DC: GPO, 2016, http://nces.ed.gov/programs/digest/d14/index.asp

բանի վրա ուսանողների ընդհանուր ծախսերի, վարկերի քանակի, ծավալի և վարկային պարտավորությունների չկատարման դեպքերի թվաքանակի աճը, ինչպես նաև ԲՈՒՀ-երի կողմից կրթության ֆինանսավորման ծավալների աստիճանական նվազեցումը վկայում են ԱՄՆԻ-ի կրթության ֆինանսավորման ներկայիս համակարգի որոշակի բարելավման անհրաժեշտության մասին:

Այժմ ներկայացնենք ՀՀ պետական բյուջեի ծախսերը կրթության ոլորտում:



Գծապատկեր 1. **ՀՀ պետական բյուջեի ծախսերը կրթության ոլորտում 2010-2023թթ. (մլն. դրամ)**[1]

Գծապատկեր 1-ի տվյալները վկայում են, որ 2010թ.-ի համեմատությամբ կրթության ոլորտում 2023թ.-ի պետական բյուջեի ծախսերն ավելացել են 103333.0 մլն դրամով: Սակայն, հարկ է նշել, որ 2017-2019 թթ.-ին կրթության ոլորտում պետական բյուջեի ծախսերի որոշակի կրճատումներ են եղել, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է ժողովրդագրական իրավիճակի փոփոխությամբ և միգրացիայով: Միաժամանակ, նշենք նաև, որ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2022 թվականին գիտության ֆինանսավորումը նախորդ տարվա համեմատ ավելացվել է աննախադեպ 82.8%-ով՝ կազմելով 25.1 մլրդ դրամ:

Ստորև ներկայացնենք նաև ՀՀ կրթության ոլորտում իրականացված պետական ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին գծապատկեր 2-ի միջոցով:

[1] «ՀՀ պետական բյուջեի մասին» 2010-2023թթ. ՀՀ օրենքները, https://www.gov.am/am/budget/



Գծապատկեր 2. **ՀՀ կրթության ոլորտում իրականացված պետական ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին 2010-2022թթ. (%)**[1]

Վերոբերյալ տվյալները վկայում են, որ 2022թ.-ին 2010թ.-ի համեմատությամբ ՀՀ-ում կրթության ոլորտում իրականացված պետական ծախսերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշը նվազել է 1.1 տոկոսային կետով: Այս ցուցանիշի նվազեցումները նկատվել են նաև 2011-2014թթ.-ին, ինչպես նաև 2019թ.-ին, այնուհետև, տեղի է ունեցել որոշակի աճ: Մասնավորապես, 2020-2021թթ.-ին նկատվել է դիտարկվող ցուցանիշի կայուն աճ: Անշուշտ, Հայաստանի Հանրապետությունը, հետապնդելով տնտեսության գիտատար ճյուղերի զարգացման գերնպատակ, պետք է որոշակի քայլեր ձեռնարկի այս ցուցանիշի աստիճանական բարելավման ուղղությամբ:

Նշենք նաև, որ ՀՀ Կառավարությունը հավանության է արժանացրել ՀՀ Եվրոպական հանձնաժողովի միջև «Հայաստանում ԵՄ աջակցությունը կրթությանը» ֆինանսավորման համաձայնագրի ստորագրման առաջարկությանը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 32 մլն եվրո: Այդ գումարից 29.3 մլն եվրոն նախատեսվում է Հայաստանին տրամադրել դրամաշնորհային հիմունքներով՝ որպես բյուջետային աջակցություն: Ծրագրի իրականացմանն օժանդակելու նպատակով կտրամադրվի լրացուցիչ տեխնիկական աջակցություն՝ ևս 2.7 մլն եվրո: Ծրագրի հիմնական նպատակն է՝ աջակցել կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին[2]:

Գիտական նորույթ: Հոդվածում բացահայտվել են ինովացիոն կրթության խթանման միջոցով կրթության ոլորտի զարգացման մեխանիզմները: Մասնավորապես՝ որպես ինովացիոն կրթության խթանման ուղիներ առաջարկվել են ինովացիոն կրթական ենթակառուցվածքների ստեղծումը, կրթության ոլորտի

[1] «ՀՀ պետական բյուջեի մասին» 2010-2023թթ. ՀՀ օրենքները, https://www.gov.am/am/budget/

[2] ԵՄ-ն աջակցում է կրթության ոլորտի բարեփոխումներին. 337 դպրոցների կտրամադրվեն բնագիտական լաբորատորիաներ, https://escs.am/am/news/17562

թվային վերափոխման գործընթացի ֆինանսավորման ծավալների ավելացումը, ինչպես նաև ուսուցիչների և դասախոսների մեդիագրագիտության և մասնագիտական որակավորման բարձրացման ինովացիոն մոտեցումների կիրառումը։

Եզրակացություններ: Հայաստանի Հանրապետությունում կրթության ոլորտի ինովացիոն զարգացման խթանումը կարող է նպաստել բնակչության կենսամակարդակի բարելավմանը, գնողունակ պահանջարկի ծավալների ավելացմանը, ընկերությունների գործունեության որոշակի աշխուժացմանը և տնտեսության մրցունակության բարձրացմանը, ինչն էլ բխում է տնտեսության զարգացման ներկայիս վիճակից։ Կրթության ոլորտի ինովացիոն զարգացման խթանման առումով մեծապես կարևորվում է կրթության ֆինանսավորման ծավալների հետևողական ավելացումը, կրթության ոլորտի թվային փոխակերպումը, առողջապահական տեխնոլոգիաների կիրառումը, ինչպես նաև անհատի նորարարական զարգացումը։ Կրթության ոլորտի ինովացիոն զարգացման գործում մեծ դերակատարում ունեն նաև բիզնես կառույցների ներկայացուցիչները, քանի որ նրանք կարող են գործուն մասնակցություն ունենալ ինչպես կրթական ծրագրերի մշակման և ֆինանսավորման, այնպես էլ ուսանողների գործնական պարապմունքների կազմակերպման և նրանց հետագա զբաղվածության ապահովման առումով։

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկայիս վիճակը՝ կարող ենք առաջարկել կրթության ոլորտի ինովացիոն զարգացման խթանման հետևյալ ուղիները.

- Նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառում,
- Կրթության ոլորտի թվային վերափոխման գործընթացի ֆինանսավորման ծավալների ավելացում,
- Ինովացիոն կրթական ենթակառուցվածքների ստեղծման և զարգացման խթանում,
- Ուսուցիչների և դասախոսների մեդիագրագիտության և մասնագիտական որակավորման բարձրացման ինովացիոն մոտեցումների կիրառում,
- Ինժեներական կրթության խթանում,
- Գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացում,
- Տեխնիկական մասնագիտությամբ ուսուցում կազմակերպող ՀՀ ԲՈՒՀ-երի և ներպետական ու միջազգային կրթական/ինովացիոն կենտրոնների միջև համագործակցության ակտիվացում,
- Երեխաներ ունեցող կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, հեռավոր բնակավայրերի բնակիչների և ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար անվճար հեռավար կրթության կազմակերպում,
- Ներառական ինովացիոն կրթության գործընթացի խթանում,
- Կրթության ոլորտի ինովացիոն զարգացման արտասահմանյան առաջատար փորձի կիրառում։

Ամփոփելով, անհրաժեշտ է նշել, որ կրթության ոլորտի ինովացիոն զարգացման խթանման արտասահմանյան առաջատար փորձի և հոդվածում ներկայացված գործնական առաջարկությունների կիրառումը կարող է նպաստել ինչպես ՀՀ կրթական համակարգի մրցունակության բարձրացմանը, այնպես էլ ինովացիոն գործունեության ակտիվացմանն ու բնակչության կենսամակարդակի բարելավմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արհեստական բանականության ոլորտի գիտնականի և նորարարի կրթական ուղի՝ սկսած դպրոցից, https://escs.am/am/news/17620
2. Բացվել են ֆիզմաթ դպրոցի ինժեներական լաբորատորիաները, https://escs.am/am/news/15687
3. ԵՄ-ն աջակցում է կրթության ոլորտի բարեփոխումներին. 337 դպրոցների կտրամադրվեն բնագիտական լաբորատորիաներ, https://escs.am/am/news/17562
4. Զախարյան Ա.Գ., ՀՀ կրթության ոլորտի թվային փոխակերպման շուրջ, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, (Գիտական հոդվածների ժողովածու - 2022), ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Երևան, 2022թ., N 2, էջ 321-365:
5. Հայաստանը միացել է «Ապահովել հիմնարար ուսումնառությունը՝ որպես կրթության փոխակերպման առանցքային տարր» գլոբալ հանձնառությանը, https://escs.am/am/news/14849
6. «ՀՀ պետական բյուջեի մասին» 2010-2023թթ. ՀՀ օրենքները, https://www.gov.am/am/budget/
7. Белов А. В., Золотов А. В. Экономические аспекты деятельности университетов в Японии, научный журнал Вопросы образования. 2014. № 3, с. 34-37, https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskie-aspekty-deyatelnosti-universitetov-v-yaponii
8. Вахштайн В. С. Система образования Финляндии, Вестник Российской академии наук, 2008, том 78, № 4, с. 360-364, http://naukarus.com/sistema-obrazovaniya-finlyandii
9. Касаткин П.И. Современное образование: функции и предназначение, Проблемы современного образования, N5, 2017, с. 109-120, https://cyberleninka.ru/article/n/sovremennoe-obrazovanie-funktsii-i-prednaznachenie
10. Кулакова М.Н. Международные модели финансирования вузов и их применения для ВУЗов России в период реформирования системы высшего образования // Территория новых возможностей. Вестник Владивостокского государственного университета экономики и сервиса, 2011. – №1 (10). – С. 51–60.

11. Burgess Dave. Teach Like a PIRATE: Increase Student Engagement, Boost Your Creativity, and Transform Your Life as an Educator, Dave Burgess Consulting, Incorporated; Illustrated edition, 2012, 198 pages, ISBN: 978-0988217607
12. Casas Jimmy, Whitaker Todd, Zoul Jeffrey. 10 Perspectives on Innovation in Education, Routledge; 1st Edition, 2019, 162 pages, ISBN: 978-1138598836
13. Digest of Education Statistics. 2014. Washington, DC: GPO, 2016, http://nces.ed.gov/programs/digest/d14/index.asp
14. Kaplin W. A., Lee B. A. The Law of Higher Education. San Francisco: John Wiley and Sons, Inc., 2007, p. 365.
15. Kaverina E. Yu. The USA. Canada: economy, policy, culture, 2003, no. 7, p. 93.
16. Sheninger Eric C. Digital Leadership: Changing Paradigms for Changing Times, Corwin; 1st edition, 2014, 264 pages, ISBN: 978-1452276618
17. Tomlinson Carol Ann, Murphy Michael. Leading for Differentiation: Growing Teachers Who Grow Kids, ASCD, 2015, 167 pages, ISBN: 978-1416620808

References

1. Arhestakan banakanowt'yan olorti gitnakani & norarari krt'akan owghi` sksac' dprocic, https://escs.am/am/news/17620
2. Bacvel en fizmat' dproci injhenerakan laboratorianery', https://escs.am/am/news/15687
3. EM-n ajakcowm e' krt'owt'yan olorti barep'oxowmnerin. 337 dprocneri ktramadrven bnagitakan laboratorianer, https://escs.am/am/news/17562
4. Zaxaryan A.G., HH krt'owt'yan olorti t'vayin p'oxakerpman showrj, Social-tntesakan zargacman ardi himnaxndirnery' Hayastani Hanrapetowt'yownowm, (Gitakan hodvac'neri jhoghovac'ow - 2022), HH GAA M. Qot'anyani anvan tntesagitowt'yan institowt, Er&an, 2022t'., N 2, e'j 321-365:
5. Hayastany' miacel e' «Apahovel himnarar owsowmnar'owt'yowny'` orpes krt'owt'yan p'oxakerpman ar'ancqayin tarr» global hand'nar'owt'yany', https://escs.am/am/news/14849
6. «HH petakan byowjei masin» 2010-2023t't'. HH o'renqnery', https://www.gov.am/am/budget/
7. Belov A. V., Zolotov A. V. Jekonomicheskie aspekty dejatel'nosti universitetov v Japonii, nauchnyj zhurnal Voprosy obrazovanija. 2014. # 3, s. 34-37, https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskie-aspekty-deyatelnosti-universitetov-v-yaponii
8. Vahshtajn V. S. Sistema obrazovanija Finljandii, Vestnik Rossijskoj akademii nauk, 2008, tom 78, # 4, s. 360-364, http://naukarus.com/sistema-obrazovaniya-finlyandii
9. Kasatkin P.I. Sovremennoe obrazovanie: funkcii i prednaznachenie, Problemy sovremennogo obrazovanija, N5, 2017, s. 109-120, https://cyberleninka.ru/article/n/sovremennoe-obrazovanie-funktsii-i-

prednaznachenie
10. Kulakova M.N. Mezhdunarodnye modeli finansirovanija vuzov i ih primenenija dlja VUZov Rossii v period reformirovanija sistemy vysshego obrazovanija // Territorija novyh vozmozhnostej. Vestnik Vladivostokskogo gosudarstvennogo universiteta jekonomiki i servisa, 2011. – #1 (10). – S. 51–60.
11. Burgess Dave. Teach Like a PIRATE: Increase Student Engagement, Boost Your Creativity, and Transform Your Life as an Educator, Dave Burgess Consulting, Incorporated; Illustrated edition, 2012, 198 pages, ISBN: 978-0988217607
12. Casas Jimmy, Whitaker Todd, Zoul Jeffrey. 10 Perspectives on Innovation in Education, Routledge; 1st Edition, 2019, 162 pages, ISBN: 978-1138598836
13. Digest of Education Statistics. 2014. Washington, DC: GPO, 2016, http://nces.ed.gov/programs/digest/d14/index.asp
14. Kaplin W. A., Lee B. A. The Law of Higher Education. San Francisco: John Wiley and Sons, Inc., 2007, p. 365.
15. Kaverina E. Yu. The USA. Canada: economy, policy, culture, 2003, no. 7, p. 93.
16. Sheninger Eric C. Digital Leadership: Changing Paradigms for Changing Times, Corwin; 1st edition, 2014, 264 pages, ISBN: 978-1452276618
17. Tomlinson Carol Ann, Murphy Michael. Leading for Differentiation: Growing Teachers Who Grow Kids, ASCD, 2015, 167 pages, ISBN: 978-1416620808

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՈՒՐՋ

Արմինե Գրիգորի Զախարյան

Համառոտագիր: ՀՀ-ում մեծապես կարևորվում է կրթական համակարգի զարգացումը, քանի որ վերջինս հանդիսանում է ինչպես գործարարության խթանման, այնպես էլ բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևորագույն միջոց: Այս պարագայում կրթության ոլորտի ինովացիոն զարգացումը դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն: Ինովացիոն կրթական համակարգը ենթադրում է ժամանակակից և պահանջարկ վայելող նորարարական ուսուցման կազմակերպում՝ միաժամանակ բոլոր կրթական մակարդակներում: Հետևաբար, անհրաժեշտ է հաշվի առնել ազգային և հասարակական մենթալիտետը, կրթության ոլորտում ձևավորված ավանդույթները, ինչպես նաև անվանի մասնագետների դասավանդման երկարամյա փորձը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել կրթության ոլորտի թվային վերափոխման և առողջապահական տեխնոլոգիաների կիրառման խնդիրներին, քանի որ դրանք նպաստում են սովորողների առավել արդյունավետ ուսուցմանը: Կրթության ոլորտի թվային վերափոխումը կարող է էապես նպաստել գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության խորացմանը, նորարարական և ներդրումային գործունեության ակտիվացմանը, ինչը բխում է տնտեսական զարգացման ժամանակակից պահանջներից:

Ինովացիոն կրթական համակարգը պահանջում է ինովացիոն կրթական ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում, կրթության ոլորտի թվային փոխակերպման խթանում, ինչպես նաև կրթության, գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության խորացում: Այս առումով մեծապես կարևորվում է ՀՀ-ում կրթության ոլորտի ֆինանսավորման հնարավորությունների և միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության թեմայի արդիականությունը:**

Հետազոտության նպատակն է ինովացիոն կրթության խթանման հնարավորությունների ուսումնասիրության միջոցով Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի ինովացիոն զարգացման ներուժի արդյունավետ կիրառման և մրցունակության բարձրացման եղանակների բացահայտումը: **Հետազոտության խնդիրներն են** ինովացիոն կրթության խթանման մեխանիզմների վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ կրթական համակարգի ինովացիոն զարգացման հնարավոր ուղիների մշակումը:

Հետազոտությունների ընթացքում կիրառվել են համակարգային և իրավիճակային վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների **մեթոդները:**

Գիտական նորույթը: Հոդվածում բացահայտվել են ինովացիոն կրթության խթանման միջոցով կրթության ոլորտի զարգացման մեխանիզմները: Մասնավորապես՝ որպես ինովացիոն կրթության խթանման ուղիներ առաջարկվել են ինովացիոն կրթական ենթակառուցվածքների ստեղծումը, կրթության ոլորտի թվային վերափոխման գործընթացի ֆինանսավորման ծավալների ավելացումը, ինչպես նաև ուսուցիչների և դասախոսների մեդիագրագիտության և մասնագիտական որակավորման բարձրացման ինովացիոն մոտեցումների կիրառումը:

Բանալի բառեր. կրթական համակարգ, կրթական մշակույթ, կառավարում, ինովացիոն կրթություն, խթանում, ֆինանսավորում, զարգացում, արդյունավետություն

ОБ ИННОВАЦИОННОМ РАЗВИТИИ СФЕРЫ ОБРАЗОВАНИЯ РА

Армине Григорьевна Захарян

Аннотация. В РА развитие системы образования имеет большое значение, поскольку последнее является важнейшим средством стимулирования предпринимательства и повышения уровня жизни населения. В данном случае инновационное развитие сферы образования становится объективной необходимостью. Инновационная образовательная система предполагает организацию современного и востребованного инновационного образования одновременно на всех образовательных уровнях. Следовательно, необходимо учитывать национальный и обществен-

ный менталитет, традиции, сложившиеся в сфере образования, а также многолетний педагогический опыт известных специалистов. Особое внимание следует уделить вопросам цифровой трансформации сферы образования и использованию здравоохранительных технологий, поскольку они способствуют более эффективному обучению учащихся. Цифровая трансформация сферы образования может существенно способствовать углублению взаимодействия науки, бизнеса и государства, активизации инновационной и инвестиционной деятельности, что вытекает из современных требований экономического развития. Инновационная образовательная система требует создания и развития инновационной образовательной инфраструктуры, стимулирования цифровой трансформации сферы образования, а также углубления взаимодействия образования, науки, бизнеса и государства. В связи с этим особенно важно изучение возможностей финансирования сферы образования в Республике Армения и международного опыта, что и определяет **актуальность темы нашего исследования.**

Целью исследования является выявление способов эффективного использования потенциала инновационного развития образовательной системы Республики Армения и повышения конкурентоспособности посредством изучения возможностей стимулирования инновационного образования. **Задачей исследования** является разработка возможных путей инновационного развития образовательной системы РА на основе результатов анализа механизмов стимулирования инновационного образования.

В ходе исследования использовались **методы** системно-ситуационного анализа, индукции и дедукции, сравнительного и факторного анализа.

Научная новизна: В статье выявлены механизмы развития сферы образования посредством стимулирования инновационного образования. В частности, как пути стимулирования инновационного образования были предложены: создание инновационной образовательной инфраструктуры, увеличение объемов финансирования процесса цифровой трансформации сферы образования, а также применение инновационных подходов для повышения медиаграмотности и профессиональной квалификации учителей и преподавателей.

Ключевые слова: образовательная система, образовательная культура, управление, инновационное образование, стимулирование, финансирование, развитие, эффективность

ABOUT INNOVATIVE DEVELOPMENT OF THE EDUCATION SPHERE OF RA

Armine Grigori Zakharyan

Abstract. In the Republic of Armenia, the development of the education system is of great importance, since the latter is the most important asset for stimulating entrepreneurship and improving the standard of living of the population. In this case, innovative development of the education sector becomes an objective necessity. An innovative education system involves the organization of modern and in-demand innovative education processes simultaneously at all educational levels. Therefore, it is necessary to take into account the national and social mentality, and traditions, that have developed in the field of education, as well as the many years of teaching experience of famous specialists. Particular attention should be paid to the issues of digital transformation of the education sector and the use of health-saving technologies, as they contribute to more effective learning for students. The digital transformation of the education sector can significantly contribute to deepening the interaction between science, business, and the State, and intensifying innovation and investment activities, which follow from modern requirements of economic development. An innovative educational system requires the creation and development of innovative educational infrastructure, stimulation of the digital transformation of the education sector, as well as deepening the interaction between education, science, business, and the state. In this regard, it is especially important to study the possibilities of financing the education sector in the Republic of Armenia and localizing international experience, which determines the **relevance of the study.**

The aim of the study is to identify ways to effectively use the potential of innovative development of the education system of the Republic of Armenia and increase competitiveness by exploring the possibilities of stimulating innovative education. **The task of the study** is to develop possible ways of innovative development of the educational system of the Republic of Armenia, based on the results of the analysis of mechanisms for stimulating innovative education.

In the scope of the study, the **methods** of system-situational analysis, induction and deduction, comparative, and factor analysis were implemented.

Scientific novelty. This article identifies mechanisms for the development of the education sector through the stimulation of innovative education. In particular, the creation of innovative educational infrastructure, increasing funding for the process of digital transformation of the education sector, as well as the use of innovative approaches to improve media literacy and professional qualifications of teachers and lecturers were proposed as ways to stimulate innovative education.

Keywords: education system, educational culture, management, innovative education, stimulation, financing, development, efficiency